

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԲԱԼԱՍԱՆ


Հայաստանի ազգային գրադարան
Գրատպության թանգարան

ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

(1 տարի անց)

Բանալի բառեր՝ Թանգարան, տպագրության պատմություն, թանգարանային միջոցառումներ, ուսումնական ծրագրեր:

Keywords. Museum, history of printing, museum events, educational programs.



Հայաստանի ազգային գրադարանի կառույցում գործող Գրատպության թանգարանը մեկամյա պատմություն ունի: Բացառիկ այս մշակութային օջախը այցելուների առջև պաշտոնապես իր դռները բացեց 2017 թ. սեպտեմբերի 25-ին՝ նպատակ ունենալով այցելուներին ներկայացնել գրատպության անցած ուղին ու դրա զարգացումը:

Թանգարանի տարբեր սրահներում փուլ առ փուլ ներկայացված է հայ-

կական գրատպության զարգացման ուղին՝ սկսած առաջին տպագիր գրքից, պարբերականից, քարտեզից, մինչև մեր ժամանակները¹: Այն հայկական տպագրության պատմությունն ամփոփող մի անկյուն է՝ ինքնատիպ ոճով, ցուցանմուշների հարուստ հավաքածուով:


Մեկ տարվա գործունեության ընթացքում Գրատպության թանգարանը ունեցել է հետաքրքիր ձեռքբերումներ: Այս կարճ ժամանակահատվածում այն դարձել է Եվրոպական Գրատպության թանգարանների ասոցիացիայի անդամ²: Թանգարանի մասին նյութը և լուսանկարները տեղադրված են European Printing Museum-ի էջում, flickr.com կայքում՝ AEPM's Flickr gallery³, ինչպես նաև Type and press-ում⁴:

¹ Թանգարանի կառուցվածքի, նպատակի, գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս Հարությունյան Բ., Գրատպության թանգարան, Բանբեր Հայաստանի գրադարանների, 2017, թ. 2, էջ 102-105 <http://bal.asj-oa.am/59/1/5-10>. [BALASAN_HARUTYUNYAN.pdf](http://balasan.harutyunyan.pdf)

² <http://www.aepm.eu/member/printing-museum-armenia/>

³ <https://www.flickr.com/photos/printing-museums/albums>

⁴ <http://typeand.press/new-blog/2017/10/20/the-museum-of-printing-in-yerevan>



Բացման օրվանից առ այսօր թանգարան են այցելել ուսանողներ, աշակերտներ, արվեստի, մշակույթի, գիտության տարբեր բնագավառներում հայտնի անհատներ: Բոլոր կարծիքները հանգում են նույն ելակետին՝ Գրատպության թանգարանը պահանջված էր հասարակության տարբեր շերտերի կողմից: Այս փաստն ինքնին խոսում է թանգարանի ստեղծման կարևորության մասին:

Թանգարանում հյուրընկալվել են բազմաթիվ պատվիրակություններ. առանձնացնենք մի քանիսը՝

- Ռուսաստանի արվեստի գրադարանի պատվիրակությունը:
- Ռուսաստանի ազգային գրադարանի պատվիրակությունը:
- Ուզբեկստանի ազգային գրադարանի պատվիրակությունը:
- Ղազախստանի Նազարբաևի անվան համալսարանի գրադարանի պատվիրակությունը:
- Ֆրանսիայի Լիոնի քաղաքային գրադարանի պատվիրակությունը:
- Բելգիայի թագավորական ակադեմիայի արվեստների մասնաճյուղի պատվիրակությունը:
- Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովի շրջանակում Ֆրանսիայից Հայաստան ժամանած Ֆրանսիացի գրողների պատվիրակությունը:
- Մասսաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի պատվիրակությունը:

Թանգարանը հյուրեր է ունեցել Ավստրալիայից, Հունաստանից, Հնդկաստանից, Ղրղզստանից, Իտալիայից, Իսպանիայից, Լիբանանից, Բելառուսից, Անգլիայից, Շվեյցարիայից, Բելգիայից, ԱՄՆ-ից, Լեհաստանի և Հունաստանի հայ համայնքներից և այլն: ՀՀ Սփյուռքի նախարարության Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» ծրագրի շրջանակներում (2018 թ. հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 11-ը՝

4 փուլերով) 173 մասնակից Հունգարիայից, Ֆրանսիայից, Ավստրիայից, Մակեդոնիայից, Բելգիայից, ԱՄՆ, Չեխիայից, Սլովակիայից, Ռուսաստանից, Իրաքից, Հունաստանից, Լիբանանից, Ուկրաինայից այցելել է թանգարան:

Հարկ ենք համարում նշել, որ Գրատպության թանգարանի թիրախային խումբը դպրոցականներն ու ուսանողներն են: Հենց այս լսարանի հետ հաղորդակցվելու համար թանգարանում մշակվում են նոր կրթական ծրագրեր ու մեթոդներ՝ նյութն ավելի մատչելի ու հասանելի դարձնելու համար: Խաղ-շրջայցի, դասախոսության, կրթական ծրագրերի միջոցով թանգարանը ստեղծում է այցելուների հետ բազմաշերտ փոխհարաբերությունների հարթակ, ինչն էլ հնարավորություն է ընձեռում ներգրավել այլ մասնակիցների: Կրթական ծրագրերի ներդրման արդյունքում թանգարանը նորովի է ընկալվում որպես կրթական տարածք: Ներկա փուլում թանգարանում իրականացվում է 6 կրթական ծրագիր՝ տարբեր տարիքային խմբերի համար՝

- «Մադրասի հայրենասիրական խմբակը. Որոգայթ Փառացը»
- «Բացահայտում»
- «Հայ գրատպության առաջնեկները»
- «Գրատպության քառուղիներում»
- «Տպագիր գրքի պատմությունը»
- «Իմ առաջին այբբենարանը»

Թանգարան-այցելու կապն ամրապնդելու, հասարակության ուշադրությունը գրավելու, թանգարանը հանրահռչակելու համար կարևոր հարթակ են միջոցառումները, որոնցից առանձնացնենք՝

- Թանգարանների միջազգային օրվա և Թանգարանների գիշեր միջոցառումների շրջանակում պատրաստված և ցուցադրված «Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադիրները» թեմայով տեսանյութը (2018 թ. մայիսի 18-19),
- Շիրակի երկրագիտական թանգարանի հիմնանորոգմանն աջակցելու նպատակով կազմակերպված ցուցադրություն «Հայկական մամուլը Ֆրանկոֆոն երկրներում» թեմայով (2018 թ. սեպտեմբերի 3),
- Մշակութային ժառանգության Եվրոպական տարի, «Կիսվելու արվեստը» խորագրով (2018 թ. սեպտեմբերի 22-23),
- Անկախության 27-ամյակին և Գրատպության թանգարանի առաջին տարեդարձի առթիվ (2018 թ. սեպտեմբերի 26),
- Գրադարանավարի օրվան նվիրված միջոցառումների շրջանակներում «Գրքի անցած ուղին» ֆիլմի դիտում (2018 թ. հոկտեմբերի 7),
- «Հեքիաթի անհայտ էջերից» թեմայով բաց-դաս:

Միջոցառումներից առանձնացնենք հատկապես «Եվրոպական ժառանգության օրերը», ինչը հնարավորություն տվեց մի անգամ ևս արժևորելու գրավոր ժառան-

գույթյան ակունքներն ու հայ գրատպության սփյուռքը: Կազմակերպվեցին հետևյալ միջոցառումները.

- «Եվրոպական Գրատպության թանգարանները» ֆիլմի ցուցադրություն,
- «Եվրոպացի հայագետները հայերենի ծագման շուրջ» թեմայով դասախոսություն:

Իսկ 2018 թ. նոյեմբերի 12-14, ՀԲԸՄ Հայաստանի ցուցասրահում կազմակերպված «Թանգարանային շաբաթ. վերանայելով մշակութային տարածքները» խորագրով միջոցառումների շրջանակներում անցկացվող MUSExpo2018-ին Գրատպության թանգարանը ներկայացավ իր առանձին անկյունով և իր հարուստ ցուցանմուշներով:

Թանգարանի գործունեության առանցքում կարևոր է նաև «Հուշանվերների



անկյունը», որը սովորական առևտրային կետ չէ: Այն թանգարանի բաղկացուցիչ մասն է և համապատասխանում է թանգարանի ոճին և առաքելությանը: Այն պետք է դիտել որպես հասարակայնության հետ կապերի միջոց: Այցելուն այստեղից կարող է ձեռք բերել այն, ինչ չի կարող գտնել այլ

վայրերում: Թանգարանից մեծ տպավորություն ստացած այցելուն ձեռք է բերում թանգարանի խորհրդանիշ կամ լոգոտիպ պարունակող որևէ հուշանվեր: Այս հուշանվերը ծառայում է նաև որպես թանգարանի գովազդ: Այստեղ հաշվի են առնվում բոլորի տարիքային և սոցիալական խմբերի հետաքրքրություններն ու հնարավորությունները:



Հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտի դիմապատկերով հուշանվեր-կրծքանշան (բրոնզ, 30 մմ.):
Հեղինակ՝ Գուրգեն Հակոբյան

Հուշամեդալ (բրոնզ, 40-40 մմ.)
Հեղինակ՝ Գուրգեն Հակոբյան



Նորոյա ընդօրինակումներ՝
հայերեն առաջին տպագիր քարտեզ
(«Համատարած աշխարհացույց»),
Ամստերդամ, 1695 թ.:

Հեղինակ՝ Կարեն Խաչատրյան



Քարտեզի դետալներով փոստային
բացիկներ:

Հեղինակ՝ Կարեն Խաչատրյան



Առանձին ներկայացնենք նաև այցելուների շրջանում առավել շատ
հետաքրքրություն վայելած ցուցանմուշները.



Փայտափորագիր տախտակ

Երևանը՝ Գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակելու և հայ գրատպության 500-ամյա հոբելյանի առթիվ տիեզերք ուղարկված և երկիր վերադարձված հայկական այբուբեն



Հոլոգրաֆիկ սարք



Առաջին տպագիր քարտեզը



Տպագրիչ (մուլյաժ)

Տպագրական մեքենաներ



Թանգարանի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է պարզել, թե ի՞նչ տպավորություն ստացավ, ի՞նչ է ակնկալում այցելուն. նմանատիպ այլ հարցեր՝ գրավոր հարցաթերթիկների տեսքով, որպեսզի բոլոր հնարավոր միջոցները ներդրվի այցելուի պահանջները բավարարելու համար: Վերջինիս պահանջների ուսումնասիրությունն ու համապատասխան եզրակացությունները կարևոր են յուրաքանչյուր թանգարանի համար:

SUMMARY

The Museum of Printing introduces the evolution of book creation across the centuries: from manuscripts to printed books. Exhibits are displayed in six halls. Some exhibits are being displayed with the use of computer technologies. These creates an interactive environment for informal education. The museum is serving as an educational hub for high school and University students.